

ՄԻ ԶԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՖՐԻԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայոց լեզվի՝ մեզ հետաքրքրող XII-XIV դարերն ընդգրկող ժամանակահատվածը՝ Ա. Այտընյանի բնորոշմամբ՝ «*նախնայաց*» կամ «*ստորին դարուց ռամկորեն*»-ի ենթափուլը, հատկանշվում է «*անմշակություն, անմիօրինակություն և օտարությանց հաճախություն*» բառերով (1, էջ 11):

Տալով հայոց լեզվի պատմական շրջաբաժանումը՝ Գ. Բ. Ջահուկյանը գրային շրջանը բաժանել է երեք փուլերի՝ հին(V-XI), միջին(XII-XIV), նոր(XV-մինչև մեր օրերը): Անդրադառնալով միջին շրջանին (XII-XIV) առանձնացրել է երկու ենթափուլեր՝ ա) *կիլիկյան նորմավորման ենթաշրջան* (XII-XIV) և բ) *աշխարհաբարացման ենթաշրջան* (XV-XIV)(7, էջ 44-49):

Ջահուկյանը, խոսելով միջին հայերենի լեզվական առանձնահատկությունների մասին, ընդունում է դրա գոյության երկու տարբերակ՝ 1) քիչ թե շատ անկախ լեզու՝ բարբառային տարբեր առանձնահատկություններով, որոնց մեջ գերակշռում են Կիլիկիայի բարբառի առանձնահատկությունները, արաբական, եվրոպական, այլև թուրքական փոխառությունների համեմատաբար առատ գործածությամբ. 2) գրաբարախառն լեզու, որ ավելի է հակված դեպի գրաբարը, որի մեջ կան ամբողջական գրաբար դարձվածքներ ու արտահայտություններ, և շեղումներ են կատարվում միջին հայերենից հոգուտ գրաբարի (7, էջ 45):

Բնականաբար այս երկույթը տարբեր հեղինակների և տարբեր ժանրերի գործերի մեջ ունեցել է իր յուրօրինակ արտահայտությունը կապված հեղինակի ըմբռնման, գործի բովանդակության, գրողի կրթական մակարդակի և գրաբարին տիրապետելու աստիճանից: Ինչ վերաբերում է Ֆրիկի լեզվին, ապա դժվար է այն վերոհիշյալ տարբերակներից մեկին վերագրելը: Ընդհանրապես, միջին հայերենի ձևավորման մասնավորապես առաջին շրջանում հեղինակի՝ *մաքուր* կամ *գրաբարախառն* լեզուն նախընտրելը պայմանավորված էր շատ հաճախ ստեղծագործության թեմայով և բնույթով. ինչպես՝ Ընդհալու մոտ: Նույն երկույթը, իհարկե, ոչ այնքան ակնհայտ, երևում է Ֆրիկի տաղերում, որոնցում լեզվի՝ գրաբարյան կամ միջինհայերենյան տարբերակին նախապատվություն տալը պայմանավորված էր հիմնականում երկի թեմայով. օրինակ՝ Ֆրիկը, իր խրատներն ավելի համոզիչ դարձնելու նպատակով, Աստվածաշնչից կամ այլ հոգևոր գրականությունից մեջբերումներ է

անում գրաբարախառն լեզվով, միևնույն ժամանակ իր խոսքն առավել մտերմիկ դարձնելու համար հակվում է դեպի լեզվի խոսակցական տարբերակը: Արդյուքում նրա ստեղծագործությունների լեզուն դառնում է վերը նշված տարբերակների սինթեզը:

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքը՝ Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Յովհաննիսյանը այսպես է բնորոշել Ֆրիկի լեզուն. «Ձուտ աշխարհաբար լեզուով գրուած Տաղեր չունի, սակայն նայած նիւթի բովանդակութեան, նորա Տաղերից ոմանք շատ անելի գրաբարի կնիքն են կրում, քան աշխարհաբարի: Այդպիսիների կարգից են նորա խրատական, կրօնական, իմաստասիրական Տաղերը: Այն տեղ, ուր Երզնի Տաղերի նիւթն է թոյլատրում՝ նա սիրով է ընդ առաջ գնում ժողովրդական լեզուին, իւր բոլոր ծեսերով: Այն տեղ, ուր նիւթը պատմական է, պատմութեան կամ առակածեւ խրատական, *նորա լեզուի կազմը, ատաղծը, բառամթերքը, ոճը՝ հայելին են իւր ժամանակի, միջավայրի ու շրջապատի»* (10, էջ 184): Ի դեպ, սա կարող է ընդհանրացվել ու վերաբերել ժամանակի համարյա բոլոր գրողների լեզվին:

Ասել է թե, միջին հայերենը, կազմավորվելով ընդհանուր նորմերի բացակայության պայմաններում, մասնավորապես բառերի ստեղծման ու գործածման հարցում ունեցել է հիմնականում կամային բնույթ՝ ենթակա ինչպես գրողի, նրա ստեղծագործության բնույթի, այնպես էլ ժամանակի, շրջապատի և միջավայրի ցանկությանն ու պահանջին: Սրանից էլ բխում էր միջին հայերենի բառապաշարին բնորոշ լեզվական իրողությունների բազմազանությունը, որն ընդհանրանալով՝ վերածվել է հայոց լեզվի այդ շրջանը բնորոշող յուրահատկության:

Փաստորեն միջին հայերենի բառապաշարը, համեմատած գրաբարի հետ, բնորոշվում է ընդգրկման սահմանների անհամեմատելի ընդլայնմամբ, որը կատարվել է ի հաշիվ.

- հնուց եկող մի շարք բառերի վերաիմաստավորման,
- բարբառային բառերի անսահմանափակ կիրառության,
- նորակազմություններով (ժողովրդական և անհատական բնույթի),
- մասնագիտական բառերի լայն տարածմամբ և մշակմամբ,
- նոր փոխառությունների ներթափանցմամբ (8, էջ 257):

Այսուհանդերձ, միջին հայերենի բառային կազմը դեռ ամբողջովին չի ուսումնասիրված. դեռևս հաստատապես հայտնի չէ միջնադարյան հարուստ գրականության մեջ գործածված նոր բառերի լրիվ քանակը, բոլոր իմաստափոխությունները, և այս ամենը ենթադրում է հետագա նոր ուսումնասիրությունների հրամայական անհրաժեշտություն:

Ընդհանրապես, որևէ լեզվի այս կամ այն շրջանի կամ որևէ հեղինակի բառապաշարի ճշգրիտ պատկերն ու բնորոշումը ներկայացնելիս՝ միշտ էլ ենթադրվում է գրավոր գրականության մեջ գործածված, բայց բանասերների ուշադրությունից վրիպած բառեր և արտահայտություններ: Այս տեսակետից բացառություն չէ նաև Ֆրիկը, որի լեզուն միջին հայերենի բառապաշարի և քերականական բազմազան ձևերի դրսևորման տիպիկ օրինակ է, և պատահական չէ, որ նրա ստեղծագործության լեզուն բնութագրելիս՝ ուղղակի կամ անուղղակի կերպով առաջնայնորեն մատնանշվել է այդ հանգամանքը:

Այսպես, Տիրայր արքեպիսկոպոսը, խոսելով Ֆրիկի տաղաչափության և լեզվի մասին, առաջին հերթին նշել է, որ «ժամանակագրական կարգով Ֆրիկը առաջին երգիչն է, որ գրում է *ժողովրդական Բարբառը գերադասելով գրաբառին* եւ յանգաւոր»/էջ 159/, ապա մանրամասնում է. «Ֆրիկի Տաղերի լեզուն գրաբար է, սակայն Սիջին Դարերի այն գրաբարը, որի մէջ զօրեղ թափով նստած է իւր ժամանակի նոր հոսանքը գրել աշխարհաբար: Եւ եթէ այդ հնարաւոր չէր,- գրել այնպէս, ինչպէս ժողովուրդն էր խոսում,- զոնէ այնպիսի գրաբարով, որ ժողովրդին լսող ու երգող խաւերին դիւրմբմնելի լինէր եւ հասկանալի:

... Երգիչը ազատ է զգում իրեն իւր Տաղերի տողերը կերտելու ոչ միայն բուն Դայ լեզուի տուեալներով, այլ եւ անխտիր ամէն ատաղծով,- իւր մտքերը արտահայտելու համար, օգնութեան է կանչում նաեւ ժամանակի Դայ լեզուի վերայ զօրեղ ազդեցութիւն թողած օտար բառերը, լայն չափով: Նորա բառապաշարի մէջ բաւական տեղ են գրաւում Արաբ, Թուրք եւ Պարսիկ բառերը»(10, էջ 159, 183, 184):

Հրաճտ Ասատուրն իր «Դիմաստուներն» գրքի ներածականում ունի Ֆրիկի վերաբերյալ մի քանի տող, որտեղ նրան դասում է «*ռամկօրէն գրող*» բանաստեղծների շարքում. «ԺԲ. դարէն ԺԷ. դար կը հանդիպինք ռամկօրէն գրող բանաստեղծներու ինչպէս Յովհաննէս Պլուզ, Կոստանդին Երզնկացի, Խաչատուր Կեչառուեցի, որ հաւանօրէն Ֆրիկն է...» (10, էջ 10):

Ըստ Մ. Աբեղյանի՝ «Նրա երկերի լեզուն միջին հայերենն է, բայց *նա լեզվի հետ բավական ազատ է վարվում*: ... Նա մեկ - մեկ հորինում է և գրաբար լեզվով, հաճախ կրոնական երկերի մեջ ընդունված սովորական դարձվածքներով ու պատկերներով և բանաձևերով, ինչպես և բազմաթիվ ակնարկներով, որոնք վերաբերում են եկեղեցու ընդունած հավատի խնդիրներին: Այս ամենով հանդերձ նրա երկերը չեն կրում հին քերականական ուսման դրոշմ» (4, էջ 289-292):

4. Բրյուսովի խմբագրած «Հայ բանաստեղծութիւն» ժողովածուի նախաբանում անդրադարձ է կատարվել նաև Ֆրիկին և նրա ստեղծագործության լեզվին. «Ֆրիկի անունով հասել են մեզ մի շարք ոտանաւորներ, գրուած դասական գրաբարով, մասամբ ժողովրդական լեզուով, նոյն ժամանակի կենդանի բարբառի, արտահայտութիւններով համեմատւած լեզուով» (12, էջ 8):

Անկասկած Ֆրիկն ինքնատիպ ու տաղանդավոր գրող է, և դա դրսևորվել է ոչ միայն ստեղծագործութեան թեմայի, այլև գործածած բառերի ընտրութեան հարցում:

Անշուշտ, Ֆրիկի բառապաշարը հագեցած և ճոխ չէ նարեկացիական պերճ ոճերով ու անզուգական նորաստեղծ բառերով, բայց նա էլ չի բավարարվել եղածով և հաճախ եղած բառն օժտել է զուտ ֆրիկյան նրբերանգով, կամ հազար անգամ տեսած ու լսած, սովորական համարվող երևոյթը, անցկացնելով իր լեզվամտածողութեան միջով, ավելի հարմար բառ չի գտել իր մտածածն ու զգացածը ներկայացնելու, քան հենց իր իսկ ստեղծածը: Ինչպես նաև նրա՝ լեզուների խառնարան հիշեցնող միտքը ձևավորել ու նորովի է արտահայտել ոչ միայն հայերեն բառերը, այլև վերցնելով օտարինը՝ սեփականացրել ու հայացրել է՝ գործածելով (թեքելով, բառաբարդելով) հայերենի օրենքներին համաձայն և հայեցի:

Այսպիսով, օգտվելով հայերենի միջին շրջանի (և ոչ միայն) ընծեռած բառակազմական բոլոր միջոցներից և հնարավորութիւններից, Ֆրիկն ստեղծել է բազմաթիվ նորակազմ բառեր, ինչպես նաև իր սկզբունքներին հավատարիմ մնալով՝ գործածել է բառերի բարբառային և խոսակցական տարբերակներ, օտար փոխառութիւններ, որ «ամենայն մարդ հասկանայ»:

Խոսելով Ֆրիկի լեզվի մասին՝ Տիրայր արքեպիսկոպոսն առանձնացրել է բառարաններում չվկայված մի շարք բառեր, որոնցում կան նաև իմաստափոխված բառեր: Դրանցից մի քանիսին անդրադառնում ենք՝ ներկայացնելով մեր մոտեցումը, որը երբեմն տարբերվում է եղած մեկնաբանութիւններից: Նշված բառերից են՝ անշառափ, անուշան, դուխաթ, թխած (կարօտ), լամբ ածել, յաւանի (նենգ), չարման, պոսել, գիվխտանիք (ծաղկանկար զգեստ), երրորդակ, թագուհ, լալուն, աղկ:

Անուշան՝ անուշ, քաղցր. գրաբարում հայտնի էր դրան ձևով և իմաստով մոտ անուշակ բառը (2, հ. I, էջ 209), որի նմանողութեամբ Ֆրիկը գործածել է անուշանը.

Չաղն բարոք ասեն՝ Տէր Բրիստոս, որ զայս հրամայէ

Զանմահն Ինքն է համ ածէ եւ զՆեխածն անուշան ընէ (10, էջ 508):

Ամենայն հավանականությամբ՝ բառը ձևափոխելով, Ֆրիկը տաղաչափական որևէ խնդիր չի հետապնդել, այլ գործածել է տվյալ բառի խոսակցական տարբերակը, մանավանդ որ նա հաճախ է նախապատվությունը տվել գրաբարյան բառերի խոսակցական տարբերակներին, ինչպես օրինակ՝ նաև նրա գործածած «լալուն» և «թագուհ» բառերն են:

Ճարակ անդենին արա, որ չի լինիս ի հաւն դու *լալուն* (10, էջ 343):

«Նոր Բառգիրք Հայկազեան լեզուին» բառարանում հանդիպում է բառիս «լալին» տարբերակը, որը հանդես է եկել որպես գոյական. ինչպես՝ *Դարձաւ երգ իմ 'ի լալին* (3, էջ 877):

Միջին հայերենում, հին երկբարբառների պարզեցման շնորհիվ, գրաբարյան իւ երկբարբառը ևս վերածվել էր երկու պարզ հնչյունների՝ ի կամ ու: Ընդ որում, իւ> ու և իւ>ի փոփոխությունները թեև նույն երկբարբառի երկու տարբեր բարբառային հնչյունափոխության դրսևորումներ սակայն. «... Միջին հայերենի տարբերակների մեծամասնության համար բնորոշ է իւ>ու փոփոխությունը» (1, հ. Ա, էջ 105), ինչն առկա է ունեցել *լալին* բառի պարագայում՝ *լալուն*:

Թագուհ. գործածվել է ընդամենը մեկ անգամ, խիստ հավանական է, որ գրիչի վրիպման կամ հիշյալ բառի համառոտագրման արդյունք լինի, բայց միևնույն ժամանակ, Ֆրիկի «Ծաշակն» ի նկատի ունենալով, չի բացառվում դրա՝ արագախոսության արդյունքում առաջացած լինելը, որը հատուկ է բանավոր խոսքին:

Երանեալ, Ընտիր, *Թագուհ* աննըման,

Մեղայ, քեզ մեղայ, Կոյս անապական (10, էջ 555):

Լամք ածել. բայական հարադրությունը է՝

Ձինչ զաւրն ի բուն մարդըն խորիի, գիշերն ամենըն խափանի,

Լամք (է)ի ածել ես աշխարհի, լուկ վազեցի հետ շատ չարի (10, էջ 288):

Ուշադրության արժանի *լամք* բառը, ըստ Տիրայր Եպիսկոպոսի, լամբք բառն է, որը նշանակում է օղակ, որի միջից ծողն անցկացնելով՝ վերցնում են բեռը (էջ 2, հ. II, 262): Սրանից ելնելով ողջ հարադրությունը բացատրում է որպես «բուռն ածել, ամուր կառչիլ, ամուր բռնել, փակչել, կպչել» (10, էջ 646):

Ինչ խոսք, Ֆրիկն այստեղ ևս բառի՝ արագախոսության արդյունքում առաջացած ձևն է նախընտրել:

Անշառափ. սա Ֆրիկի ստեղծած նորակազմություններից է, որը մեկ անգամ կիրարկվել է իր «Նորին Ֆրկանն ասացեալ տաղ հոգեշահ» բանքում:

Ձինչ որ խոյանայ բազան ու կաքաւըն առնու ի յափ.

Կու տիրե առ իս շատ մեղք զինչ անծրև, որ երբ գայ *շառափ*

խոցել է զիս ահն ու մահն ու արել սիրտս *անշառափ* (10, էջ 485):

Այս առիթով նախ նշենք, որ բառարաններում Ֆրիկին վերագրված բառերի հիմնական մասը սովորաբար մեկ անգամ է գործածել, որոշ բառեր՝ նույնիսկ երեք անգամ: Հիմք ընդունելով Հայկական համաբարբառի և Սիջին հայերենի բառարանի տեղեկությունները բերենք հետևյալ փաստերը. անընչիկ, անթափդիր, անհծաբան բառերից յուրաքանչյուրը գործածել է մեկական անգամ, անքննակ բառը՝ երեք անգամ և այլն: Իհարկե, կան նաև այնպիսի նորակազմություններ, որոնք Ֆրիկն օգտագործել է ավելի հաճախադեպ՝ յոթից ութ անգամ. /ինչպես՝ աղամորդի/ յոթ անգամ/, որոնք, սակայն, մեծ թիվ չեն կազմում:

Անդրադառնալով *շառափ* արմատին, ասենք, որ «Արմատական»-ում ներկայացված է երկու իմաստով. նախ՝ «յորդ անծրև, տեղատարափ», ապա՝ «լոյս, ճառագայթ, փայլ»: Առաջին իմաստով բառը հանդիպել է միջնադարյան գրականության մեջ.

Հանցկուն եմ ի քո սիրուդ՝ զինչ ամպերն կառնեն շառափ:

Կուտակեցաւ առ իս շատ մեղք յայն նման որ երբ գայ շառափ (2, հ. III, էջ 497):

Իսկ երկրորդ իմաստն առնչվում է արաբերեն *լոյս* կամ *պերճություն* արմատի հետ, որը, սակայն, Աճառյանը համարում է կասկածելի՝ ձեռքի տակ բավարար վկայություններ չունենալու պատճառով (2, հ. III, էջ 497):

Ըստ երևույթին, այս բառի մեջ խտացել են երկու իմաստներն էլ. *տեղատարափ* իմաստին ավելացել են *փայլ*, *լոյս* իմաստները՝ բառին օժտելով նոր նրբերանգով՝ անծրև կամ կարկուտ՝ կայծակի, ամպրոպի ուղեկցությամբ, մանավանդ որ Ֆրիկը բանաստեղծական տան մեջ գործածում է և՛ անծրև, և՛ շառափ բառերը՝ անշուշտ դրանց իմաստային տարբերությունը քաջ գիտակցելով:

Սրանց հետ ընդհանուր աղերսներ ունեն Տիրայրի նշած իմաստային տարբերակները: Վերջինս *անշառափ* բառը մեկնաբանել է որպես «1. անվրդով, անդորր, 2. տըմոյր, անլոյս, խաւար» (10, էջ 629): Եվ ինչպես տեսնում ենք վերջին իմաստի հետ ուղղակի առնչություն ունի վերը նշված արաբերեն տարբերակը: Հավանական է, որ միջնադարում արաբերենի ազդեցությամբ համանուն արմատների իմաստային խաչասերում է տեղի ունեցել:

Աղկ. համեմատելով խոսակցական տարբերակում առկա *ախկ, եախկ* ծայնարկության հետ, մեկնաբանված է որպես «վատ, անարգ, աղքատ... ունի նաև աղպաղկ՝ աղքատ խեղճ» (10, էջ 626) իմաստները:

Որ բաժանեն գվատն *յաղկեն* (10, էջ 297):

Նշված բառը հանդիպում է միայն տարբերակներից մեկում, իսկ մյուսներում և մասնավորապես Ղիւանում տեղ գտած հիմնական տաղում գործածված է բառիս *լավ* տարբերակը. օրինակ՝ Որ բաժանենք գլավն ի վատն...

Փաստորեն, փոփոխակում առկա *յաղկեն*. ձևը *աղեկի* բացառական հոլովածն է՝ *ե* ծայնավորի սղմամբ:

Հաջորդ՝ *պոսել* բայը, Տիրայրը, նմանեցնելով պոզ՝ եղջյուր բառ ի հետ, ենթադրել է, թե այն նշանակում է *պոզ ցույց տալ, դիմադրել, յաղթահարել* (10, էջ 674):

Ով որ ցանկանայ այս բանիս, թող կըռուոյ զինքըն պատրաստէ, Հանցեղ պատերազմ ունի, դըժվարիւ է այն՝ թէ պոսէ (10, էջ 347):

«Արմատական»-ում *պոսիպոս* արմատը նորագիւտ և անստոյգ բառ է համարվում, «երկու անգամ ունի Կեչառ. Ով վատշուէր Նեգդաներոս, որ թագաւոր էիր յեգիպտոս, ո'չ թէ հզօր ձեռամբ հարուս, այլ լականովդ պոսիպոս. Այս քեզ խրատ Ալեքսանդրոս, որ չխաղաս այլ պոսիպոս: Բառս երևան հանեց Նորայր, որ համեմատելով պօսպօսող բառի հետ՝ կցում է կա'մ գւռ պոսիպոս տալ «պատերի տակ կուչ եկած ման գալ» ձևին, և կա'մ համարում է մի տեսակ խաղ» (2, հ. VI, էջ 100):

Նույնահունչ մեկ այլ արմատ՝ *պօսպօսող*, բացատրվում է որպես՝ *կեղծավոր, խաբեբայ, շողոքորդ*: Ինչպես նաև նշվում է, որ Ղարաբաղի բարբառում կա *պօսպօս անել* արտահայտությունը, որը թարգմանվում է «այս ու այն կողմ պահվտիլ և թաքուն նայել. կայ և *պօս տալ, պօսել* Կր. թաքուն հեռանալ» (2, հ. VI, էջ 117):

Ընդ որում, *պօսպօսող* ձևը կա Առձեռն բառարանում՝ որպես «ռամկօրէն բառ»:

Տրիկի գործածած *պոսել* բառը իմաստային առումով շատ ավելի մոտ է Ղարաբաղի բարբառային տարբերակին՝ պոսել կամ պօսել՝ թաքուն հեռանալ, խույս տալ:

Ղուխաթ կամ *տուխաթ*. Տիրայրի մոտ դուխաթը բացատրվում է նախ որպես *ducal* բառի հայերեն տարբերակ, ապա գտնելով, որ այն իմաստային առումով չի համապատասխանում տեքստին՝ ներկայացնում է իր տարբերակը.

առաջարկելով մտքին ավելի համապատասխան տիխաթ, տիղաթ բառը, որ նաշանակում էր ուշադրություն, հոգածություն (10, էջ 681):

Կարծում ենք՝ այս իմաստը ևս այնքան էլ չի համապատասխանում տեքստին:

Սերն որ հաստ ու կարծ լինի, նայ, յետոյ լէքան կու բացուի,

Աւրի իւր շատ տուխաթը, հոգոյն շատ վնաս հասանի (10, էջ 491):

Ակնհայտ է, որ այս բառն ունի օտար ծագում և նախնական ձևի աղավաղման հետ մեկտեղ նաև իմաստափոխվել է՝ հեռանալով բուն նշանակությունից, ընդհանրապես նշված ուշադրություն և հոգածություն բառերի հետ հայերենում սովորաբար շատը կամ քիչը որպես որոշիչ չեն գործածվում, ինչպես նաև տուխաթի հետ գործածված բայը ևս չի համապատասխանում տեքստի իմաստին:(?)

Հետաքրքիր է, որ տաղի մյուս փոփոխակն էլ ոչինչ չի հուշում. առկա երկու տարբերակներում էլ նշված բառը նույն կերպ է գրված:

Նպատակահարմար ենք գտել խոսել ոչ միայն բառարաններում տեղ չգտած բառերի, այլև չարձանագրած իմաստափոխությունների վերաբերյալ: Այդպիսի բառերից է *թխած* բառը, որը Ֆրիկի Դիւանին կցված բառարանում բացատրված է *կարօտ* իմաստով (10, էջ 645):

Քիմը *թխած* կացել յերակ զամեն գարշ, պիղծ հոտոտելոյ

Այն որ պիտէր բեզ հոտոտել ի շիրիմաց խնկահոտոյ,

Աւրինել, գովել, փառաւորել զՀայր եւ զԲորիցն ընդ Սուրբ Հոգոյ (10, էջ 303):

Նկատի ունենալով Ֆրիկի վերոհիշյալ տաղի իմաստը՝ կարելի է ասել, որ *թխած* բառն առավելապես հանդես է եկել *պատրաստ* իմաստով: Ֆրիկը տաղում չի խրատում, այլ հանդիմանում է, և հանդիմանում է ոչ թե զգուշացնելով, այլ արդեն կատարված փաստն արձանագրելով, հետևաբար՝ *թխածը* այստեղ ոչ թե *կարօտ* իմաստով է, այլ *պատրաստ*:

Յաւանի. Դիւանի բառարանում բացատրված է որպես «քսու, նենգ, մատնիչ, նենգաւոր, անվստահելի» (10, էջ 665):

Մէկն նման է Յուդայի, որ է մատնող եւ *յաւանի* (10, էջ 539) :

Ընդ որում, սա տեղ է գտել տարբերակներից մեկում, և հավանական է, որ աղավաղված բառի հետ գործ ունենք, այնուամենայնիվ, «Արմատական»-ում կա *յաւակն* արմատը, որ նշանակում է «յանդուգն, լիրբ, որից ունենք *յաւակնոտ*, *յաւակնութիւն*» բառերը (2, հ. III, էջ 390):

Փաստորեն, այս արմատը գործածելով՝ Ֆրիկն ստեղծել է Նոր բառ, մանավանդ որ այն իմաստով համապատասխանում է տաղին:

Յետաքրքիր է, որ ֆրիկի տաղերում հանդիպում են նաև պարսկերեն բառեր, որոնք հայերենին հատուկ թեքման ու բառաբարդման շնորհիվ որոշակիորեն իմաստափոխվել են, հայացվել: Ինչպես՝ *գիւլիստանիք կամ կուլիստանիք* բառը պարսկերեն *գոլ /վարդ/ և ստան* արձատներից է, որը, *վարդաստան* իմաստով հայոց մեջ՝ մասնավորապես աշուղական խոսքում, լայնորեն կիրառվել է: Ֆրիկի տաղերում հանդիպում է *ժողկանկար կամ վարդանկար գգեստ* իմաստով (10, էջ 636): Այս իմաստային առումով ոչ մի բառարանում չկա, ինչպես և պարսկերենում: Ընդ որում, բառիս պարսկերեն տարբերակում – *ք հնչյունը* չկա, այսինքն այն զուտ հայկական հավելում է:

Նախ ու նասիֆ, քեմխա ու սօֆ,

Կյուլիստանիքն, որ դու հագար

Բարձր ես նստել ի վերայ խալուղ՝

Յետև տի գաս աղկից ի վար (10, էջ 479):

Փոշիմանութիւն. Մույնը կարելի է ասել այս բառի վերաբերյալ. պարսկական արմատին հավելելով – ություն ածանցը՝ գոյացել է նոր բառ:

Օրինակ՝ Ողբանք փոշիմանության; Բանք ոգեշահ եւ լաւ յաղագս փոշիմանության(10, էջ 288; 362):

Արմատական բառարանը տալիս է տվյալ փոխառյալ արմատի երկու տարբերակ. հին *փաշաման* և նոր *փոշիման*՝ նշելով գրականությունից մի շարք օրինակներ. *ինչպես՝ փօշաման, փօշամնիլ /Անսիզք, Սմբատ Գունդստաբլ/, փոշամնչեք /Սմբատ Գունդստաբլի Ղատաստանագիրք/ հնին ավելի մոտ ձևը, իսկ նոր համարվող տարբերակը հանդիպում է Ժե-ԺՁ դարերի հեղինակներ Առաքել Սյունեցու, Թլկուրանցու, Քուչակի մոտ (2, հ. VI, էջ 481; 517): Նշված արմատը փոշիման ձևով դրսևորվում է թուրքական տարբերակում, թերևս դա է պատճառը, որ ավելի ուշ ժամանակաշրջանում, թուրքերենի ազդեցության ընդլայնմամբ պայմանավորված, ավելի տարածվել է բառիս երկրորդ տարբերակը:*

Ի դեպ, Ֆրիկի երկերում հանդիպում է նոր համարվող տարբերակը: Զիչ հավանական է, որ այն հետագա դարերի գրիչների հավելում լինի, քանի որ հանդիպում են և մույն արմատից կազմված այլ բառեր ևս՝ ոչ միայն հնչյունական մույն դրսևորմամբ, այլև մեկից ավելի անգամներ. *փոշիմնել, փոշմնել, փոշիմանություն* բառերը գործածվել են 2 անգամ, իսկ *փոշիմանը* երեք անգամ:

ՔՆՆՆելով Ֆրիկի լեզուն՝ վստահաբար կարող ենք ասել, որ թուրքերենի* ազդեցությունն անչափ քիչ է, և նկատի ունենալով նշված փաստերը՝ կարող ենք եզրակացնել, որ կամ Ֆրիկն ուղղակի թուրքական տարբերակն է գործածել, կամ այն տարածված է եղել ԺԳ դարից սկսած:

Հարման բառը նույնպես չի հանդիպել մեր ձեռքի տակ եղած բառաքաններում: Միայն Տիրայրն է տալիս բառիս մեկնաբանությունը. «Հակադարձ շարժում, հակառակություն, յետադարձ, յետախաղաց» (10, էջ 671):

Հոգին ի մարմնոյն ձեռքըն կու դողայ գերդ ի քերմնոցի

Թէ աշխարհ չի գայ *չարման*, որն առնու լեքան՝ չի հատնի (10, էջ 492):

Տեքստում *չարման* բառից հետո կա լեքա-բիծ, որը խոսքային կոնտեքստում կարող է դրսևորել *թերություն*, *այիս* իմաստները ևս:

Հետևաբար, *չարման* բառը կարելի է մեկնաբանել *վնասակար թերություն*, *վնասատու* և վերջապես՝ *չարիք* իմաստներով:

Ֆրիկը «լեզվի հետ բավական ազատ է վարվել» (4, էջ 289), նմանօրինակ վերաբերմունք է դրսևորել նաև բառագործածման հարցում. շատ հաճախ հանգերը հարմարեցնելու նպատակով բառը ձևափոխում է իր տաղի համար ավելի նպաստավոր ձևով, ինչպես.

Օր հետ աուրց մահն է *ճաշակ*.

Անկաւ ի կուպրն *եռանդակ*...

Նոյ չինէ քեզ *տապանակ* (10, էջ 413):

«Նորին Ֆրկանն ասացեալ ողբանք ի վերայ գալստեանն և ծախելոյ» տաղում գործածվել են *երրորդակ* և *երրորդական* բառերը՝ *եռյակ* իմաստով, որոնցից *Ղիւանին կցված բառարանում տեղ է գտել միայն երրորդակը*. որ փոփոխականներից միայն մեկում է հանդիպում («երրորդակ միութիւն»), և ամենայն հավանականությամբ գրիչի «համառոտագրության» արդյունք է:

երրորդական միութիւն արարին խորհուրդ ու հնար,

եկայք, որ մարդ արասցուք մեզ նման պատկեր մի գաւհար (10, էջ

397):

* *Թուրքերեն* բառը մենք ևս գործածում ենք պայմանականորեն՝ հիմք ընդունելով Աճառյանի կարծիքը. «...սելջուկներ, Պարսկաստանի թուրքերը, մոնղոլ թաթարներ, եօզբէկ թաթարներ, թուրքմեններ և վերջապես՝ օսմանցիք կամ տաճիկներ: Այս ժողովուրդները թեև առանձին-առանձին անուններ են կրում, բայց լեզվով այնքան մեծ տարբերություն չունին միմյանցից և միևնույն թուրքերեն բառի տակ կարող ենք հասկանալ բոլորի լեզուն»: (Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատոր II, Երևան, 1951, էջ 258):

Քաստիկ բառը հանդիպում է Ա' Արմատական, Ա' Սիջին հայերենի բառարաններում:

Հասիր թե զալոց է օրն, որ լինի ահեղ հրապարակ.

Քաստիկ, որ կըրես հիմիկ, մեծ ամառք եւ մերկ խայտառակ (10, էջ 367):

Ըստ Արմատական բառարանի այս բառը հանդես է գալի «լաւ, աղէկ» (փաղաքշական) նշանակությամբ (2, հ. I, էջ 417):

Սիջին հայերենի բառարանում այն ներկայացվում է որպէս գոյական և բացատրվում է «երջանկություն, բախտ» իմաստներով և բերվում է Ֆրիկի տաղից նշված հատվածը (6, էջ 115): Իսկ Տիրայր արքեպիսկոպոսի բառարանի համաձայն *քաստիկ* բառը առաջացել է պարսկերեն *քաս* արմատից, որն ունի «*ուրեմն, արդ*» իմաստները (10, էջ 633). տեքստի արտահայտած իմաստին ավելի համապատասխանում է բառիս *բախտ* իմաստային տարբերակը:

Ֆրիկի բառապաշարի մի փոքր հատված քննելիս՝ կարելի է եզրակացնել, որ նա փորձել է հնարավորին չափ մոտ լինել լեզվի խոսակցական տարբերակին՝ ավելի ճիշտ ու լավ հասկացվելու, հոգեհարազատ լինելու համար: Նրա ստեղծագործության հիմնական թեման խրատն է, իսկ խրատատուն պիտի հասկանալի լեզվով շարադրի իր մտքերը, «*Ֆրիկը հանց պարզ է խոսել, որ ամենայն մարդ հասկանա*», - գրում է բանաստեղծը, սա վերացական կամ պատահական խոսք չէ, Ֆրիկը հավատում և հավատացնում էր, որ իր խրատներին հետևողը անանց լույսին պիտի տիրանա.

Թէ դու լսես այս խրատիս, անանց լուսոյն շուտ հասանիս (9, էջ 37):

Օգտագործված գրականության ցանկը

1. Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, Երևան, հ. Ա-Բ, 1972-1975:
2. Հր. Աճառյան, Հայերեն Արմատական բառարան, հատոր I-IV, Երևան, 1971-1979:
3. Նոր Բառգիրք Հայկազեան լեզուին, հատոր Ա, Բ, Երևան, 1979-1981:
4. Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երևան, 1970:
5. Ա. Սնացականյան, Հայրեններ, Երևան, 1995:
6. Ռ. Ս. Ղազարյան, Հ. Ս. Ավետիսյան, Սիջին հայերենի բառարան, հատոր Ա, Բ, Երևան, 1987:
7. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
8. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:
9. Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941:
10. Ֆրիկ, Դիւան, Նիւ Եորք, 1952:
11. Հայկական համաբարբառ, 19, Ֆրիկ, Բանաստեղծություններ, հ. 1-2, 1986-1987:
12. Հայ բանաստեղծություններ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. Մոսկվա, 1916: